

# New Hope Singers

Lord I Come To You “Album 2014”

## Lyrics

ON THE EARTH'S GRAY SHORES  
JESUS MY LORD  
WITH MY SINS O LORD  
I KNOW YOU LOVE ME  
COME! LET US REJOICE  
WHY ME LORD  
LORD I COME TO YOU  
WHEREVER I AM  
YOUR FRIEND CALLS YOU  
THE HEALING TOUCH  
PRAISE HIM ALLELUIA

ON THE EARTH'S GRAY SHORES

ԱՇԽԱՐՀԻ ԳՈՐՇ ԱՓԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Աշխարհի գորշ ափերուն վրայ  
Սէր կը փնտռեմ, բայց սէր չկայ.  
Սիրտ կը փնտռեմ, բայց սառած են,  
Տաքուկ հոգի՜ այդ ալ չկայ.  
Թներ տուր ինձ, որ վերանամ,  
Բարձունքներուդ ես սլանամ:  
Չար մարդոցմէ, վատ սրտերէ,  
Յուդաներու համբոյրներէն,  
Նայուածքներէն սուտ սէրերու,  
Խաբկանքներէն կեղծ յոյսերու:  
Թներ տուր Տէր, որ վեր թռչիմ,  
Ներկայութեանդ մէջը հանգչիմ:

JESUS MY LORD  
ՓՐԿԻՉ ԻՄ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ

*Փրկիչ իմ, Տէր Յիսուս, Քեզ սիրում եմ:  
Փրկիչ իմ, Տէր Յիսուս, Քեզ պաշտում եմ,  
Երկրպագում, փառաբանում,  
Ամբողջ աշխարհում հռչակում  
Եւ պանծեցնում եմ Քո անունը:  
Փրկիչ, Փրկիչ, Քեզ պաշտում եմ:*

WITH MY SINS O LORD

ՄԵՂՔԵՐՈՎՍ ՏԷՐ

Մեղքերովս, Տէր, ահա Քեզի կուգամ,  
Կոտրած սրտով, Տէր, հիմա Քեզի կուգամ:  
Տէր, շատ լաւ գիտեմ, կը տեսնես իմ սիրտը,  
Մեղքերով ճնշուած մեղապարտ իմ սիրտը:  
Մեղքերովս, Տէր, ահա Քեզի կուգամ,  
Կոտրած սրտով, Տէր, հիմա Քեզի կուգամ:  
Խիղճս կը տանջէ, զիս ցորեկ գիշեր,  
Եւ կ'ամբաստանէ Քու առջևդ Տէր:  
Կ'ուզեմ ազատուիլ հոգեկան այս խռովքէն  
Ու թիթեռի պէս թեթև ըլլալ մշտօրէն:  
Ծարաւած սրտով աղբիւրիդ կուգամ,  
Քաղցած ու յոգնած, ահա, Քեզի կուգամ:  
Ճաշակել կ'ուզեմ երկնային մանանայէդ  
Ու խմել կենաց յաւիտենական ջուրէդ:

I KNOW YOU LOVE ME  
ԱՍՏՈՒԱԾ, ԻՄ ԱՍՏՈՒԱԾ

*Աստուած, իմ Աստուած, գիտեմ, ինձ տեսնում ես.*

*Չաղօթեմ անգամ, գիտեմ ինձ տեսնում ես.*

*Երբ հեռանում եմ, նորից ինձ կանչում ես,*

*Երբ մեղանչում եմ, կրկին ինձ ներում ես.*

*Փոթորկոտ սիրտս Դուն խաղաղեցնում ես,*

*Գթառատ Հայր իմ, միակ յոյսս Դուն ես:*

*Աստուած, իմ Աստուած, գիտեմ, ինձ տեսնում ես.*

*Չաղօթեմ անգամ, գիտեմ, տեսնում ես.*

*Աստուած, իմ Աստուած, գիտեմ, ինձ սիրում ես.*

*Չսիրեմ անգամ, Դու ինձ միշտ սիրում ես.*

*Երբ խոտորում եմ, նորից ինձ փնտռում ես,*

*Երբ կորսւում եմ, նորից ինձ փրկում ես.*

*Ընկճուած հոգիս Դուն նորոգում ես,*

*Ողորմած Տէր իմ, միակ կեանքս Դուն ես:*

*Աստուած, իմ Աստուած, գիտեմ, ինձ սիրում ես.*

*Չսիրեմ անգամ, Դու ինձ միշտ սիրում ես.*

COME! LET US REJOICE

ԵԿԷՔ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ՑՆԾԱՆՔ

*Եկէք մենք միասին ցնծանք երգելով, փառք տալով,  
Ցնծանք և ուրախ ըլլանք երգելով, ծափ տալով:*

*Տխրելու մենք պատճառ ունինք,*

*Շատ հարցերով ալ կ'ընկճուինք,*

*Սուրբ գիրքը մեզ կը հրամայէ,*

*Հոգսերդ Անոր վրայ ձգէ,*

*Հարցերդ Իրեն վստահէ,*

*Հիմա զանոնք Իրեն յանձնէ:*

*Զի Տէրը բարի է, սէրն յաւիտենական է:*

## WHY ME LORD

ԻՆՉՈՒ՞ ԿԸ ԿԱՐԾՐԱՑՆԵՍ

Ինչու՞ կը կարծրացնես ինձի պէս եղկելիին սիրտը,  
Որ չ'երկնչիմ Քենէ, անհա՛ւ ու և անաւոր  
Ձըլլայ, որ երկնեմ ու չծնիմ, ողբամ ու չարտասուեմ:  
Ձըլլայ, որ խորհիմ ու չհառաչեմ, ամպեմ ու չանձրևեմ  
Ձըլլայ, որ քալեմ ու չհասնիմ, ձայնեմ ու Դուն չի լսես:  
Ձըլլայ, որ պաղատիմ ու անտեսես, կողկողիմ ու չողորմիս.  
Ձըլլայ, որ աղաչեմ ու չօգտուիմ, զոհեմ ու չճենճերիմ.  
Ձըլլայ, որ Քեզ տեսնեմ ու դատարկ ելլեմ, ծունկի իջնեմ-  
ու ետ չկանգնիմ:  
Լսէ՛ ինձի, Դուն որ մի միայն հզօր ես,  
Քեզի կանչելես ալ առաջ ինձի պէս չարագործին,  
Որ կեանքիս օրերուն չափ մեղքով ապրած եմ,  
Մի հատուցաներ, անվճառ մնացած տանջանքներու  
պատիժը,  
Ապրեցու՛ր զիս. գթած լսէ՛, ողորմած:

## LORD I COME TO YOU

*In my sins, O Lord, now I come to You,  
With a broken heart, behold I come to You.  
Lord, I know full well, You search out my spirit,  
Burdened down with sins, my heart, my soul, my spirit.  
In my sins, O Lord, here I come to You,  
With a broken heart, behold I come to You.*

*Torn by conscience, Lord, all night long and day,  
In Your presence borne, I stand condemned today,  
Yearning to be free, my spirit liberated,  
Like a butterfly, released and gently lightened.  
In my sins, O Lord, here I come to You,  
With a broken heart, behold I come to You.*

*By Your hand divine, lift me from the mire,  
Free me from this pit, sin has plunged me down.  
By Golgotha's cross, with blood so freely given,  
Grant forgiveness now, My God, My Lord Redeemer.  
In my sins, O Lord, here I come to You,  
With a broken heart, behold I come to You.*



WHEREVER I AM  
ՈՒՐ ԷՆ ԼԻՆԵՄ, ՍԷՐ ՅԻՍՈՒՍ

*Ուր էլ լինեմ, սէր Յիսուս, Դու ինձ հետ ես, Տէր Յիսուս,  
Իմ սրտի ու մտքի մէջ. կեանքի, յոյսի լոյս, Յիսուս,  
Իմ բարեկամ, Յիսուս, իմ խօսքի մէջ, շունչի մէջ.  
Մի թողուր ինձ, Տէր Յիսուս, մենակ ու անտէր,  
Յիսուս, ո՛ր և կը կորչեմ առանց Քեզ.*

*Երբ զիս ընդունեցիր, Փրկիչ,  
Սիրտս սրտիդ միացաւ ու հոգիս հանգստացաւ:  
Յոգնած, հնշուած, Տէր Յիսուս, շատ սպառած եմ ու անյոյս.  
Մինչև ե՞րբ պիտ տառապեմ. միակ դարման իմ վէրքի  
Եւ բալասան իմ ցաւի. Դպչէ հոգւոյս, որ ապրեմ:*

\

YOUR FRIEND CALLS YOU  
ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ, ՎՍՏԱՀ ԵՂԻՐ

Քրիստոս Յիսուս, վստահ եղիր, քեզ շատ լաւ գիտէ,  
Ամենատես աչքերով քեզ շատ լաւ կը տեսնէ,  
Կեանքի ցաւերդ ու հոգերդ Ան շատ լաւ կը զգայ,  
Վաղուայ օրդ քեզմէ առաջ առջևէդ կերթայ:  
Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, Տէր Յիսուս քեզ պիտ կանչէ,  
Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, Տէր Յիսուս պիտ հրաւիրէ,  
Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ, անտարբեր դուն պիտ ըլլաս,  
Ասա ե՞րբ, Ասա ե՞րբ, սիրտդ անոր պիտ բանաս:

THE HEALING TOUCH

ՊԱՂ ՀՈԳԻՈՅՍ ԵՐԲ ԴՊԱԻ ՅԻՍՈՒՍ

*Պաղ Կոզլոյս երբ դպաւ Յիսուս  
Թրթռաց մեղեդի մը անոյշ,  
Մեղեդի մը ողորմութեան  
Աստուածային վեհ գթութեան:*

*Հիմա շրթներս կ'երգեն երգը ազատութեան,  
Փրկեալներու յաղթական երգը ցնծութեան:*

PRAISE HIM ALLELUIA

ՓԱՌՔ ՔԵԳ ՏԷՐ

Փառք Քեզ Տէր, ալէլուիա

Փառք Քեզ Տէր, ալէլուիա

Ճանչցէք Տէրն է մեր Աստուած  
Իր նմանութեամբ մեզ է ստեղծած.

Այո՛, մենք Իր ժողովուրդն ենք,

Իր արօտին ոչխարներն ենք.

Փառք Քեզ Տէր, ալէլուիա

Փառք Քեզ Տէր, ալէլուիա

Իր Սուրբ խօսքով կանչուած ենք,

Իր անունով կնքուած ենք,

Սուրբ Հոգիով համոզուած ենք,

Տէր Յիսուսով փրկուած ենք.

Փառք Քեզ Տէր, ալէլուիա

Փառք Քեզ Տէր, ալէլուիա: